Հյուսիսային համալսարանը “InYous” միջազգային քառօրյա գիտաժողովին

2018թ. ապրիլի 20-23 ընկած ժամանակահատվածում Հյուսիսային համալսարանը մասնակցել է «Երիտասարդական ոչ ֆորմալ աշխատանք և ֆորմալ երիտասարդական հետազոտություններ» միջազգային քառօրյա գիտաժողովին, որի նախաձեռնողներն են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երիտասարդական ակումբների դաշնությունը:

Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությանը և արդեն իսկ 2019թ-ին ունենալ մշակված մագիստրոսական հեռավար դասընթաց այդ թեմայի շուրջ:

Գիտաժողովի բացման հանդիսավոր արարողության ժամանակ ելույթ է ունեցել համալսարանի «Տնտեսագիտության և կառավարման» ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանը, ով իր խոսքում արդրադարձել է երիտասարդական աշխատանքի համատեքստում հեռավար կրթության հիմնախնդիրներին:

Ծրագրին մասնակցում էին 2-4-ական ներկայացուցիչ Պորտուգալիայից, Բելգիայից, Չեխիայից, Շվեդիայից, Լեհաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Մոլդովայից, Բելառուսից, Թուրքիայից, Ուկրաինայից, Վրաստանից, ովքեր մեծամասամբ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ էին:

Գիտաժողովի հաջորդ 3 օրերին տեղի են ունեցել ծրագրի ոչ ֆորմալ գործողությունները, որի ընթացքում թիմային աշխատանքների միջոցով անդրադարձ է կատարվել երիտասարդական աշխատողին ներկայացվող անձնային պահանջներին, ինչպես նաև ակնկալվող դասընթացի մոդուլներին:

Միջազգային գիտաժողովի հաջորդ փուլերը տեղի են ունենալ Վրաստանում, Չեխիայում, Ուկրաինայում և Բելգիայում: